որ ողբալով դիմում ենք քեզ»: Այդպես նրան մտցրին եկեղեցին և մինչև առավոտ հսկում կատարեցին պաշտամունքով ու սաղմոսներով: Հաջորդ օրը, որ Տիրոջ համբարձումն էր, հրամայեցին նրան Քրիստոսին պատարագել, և բոլորը նրա կողմից հաղորդվեցին: Նա մնաց Լիմի անապատում ևս ինչ-որ տարիներ: Ապա կաթողիկոս Փիլիպոսը նրան այնտեղից հանեց և պահեց իր մոտ, որպեսզի դաս տա միաբաններին:

Այո՛, մենք սովորեցինք Մելիքսեթի գրած նույն պատմությունից, որ հաճախ ավելի մեծ էր, քան սաղմոսները: Այս գիրքը գտնվում էր Օհանավանքի գրատան մեջ: Նրա աշակերտները խնդրեցին, առան տարան, չգիտեմ, թե ինչ արին: Սրա մնացած պատմությունը՝ մորուքի փետումը, սրա մահը իր տեղում կպատմենք:

ԳԼՈՒԽ ԽԵ
ՄԽԻԹԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՎԱՐՔԸ

Այս աստվածահաճո և քրիստոսասեր մարդը՝ Մխիթարը, Գեղարքունի[105] գավառից էր՝ Ծմակ կոչված գյուղից, որ կոչվում էր Դալուղարդաշ. բարեպաշտ քրիստոնյաների զավակ էր, իր մանկությունից երկյուղած էր ու բարեսեր, միշտ մտմտում էր Աստծու պատվիրանները և հակում ուներ հոգևոր գործերի, ուզում էր մենակյաց լինել: Քանզի ուսեալ էր եկեղեցական կարգավորությունների մեջ, կարդացել էր սաղմոս ու շարական և շատ հաճախ աղոթք էր անում, ուստի ուզում էր աբեղա դառնալ: Եվ որովհետև գյուղը քահանա չուներ, այս պատճառով գյուղացիները նրա ծնողներին ստիպում էին՝ ամուսնացնել նրան, որ օրհնեն գյուղի քահանա:

Թեպետ Մխիթարը չէր կամենում զույգավորվել, սակայն գյուղացիների խնդրանքի և ծնողների թախանձանքի պատճառով նրան ամուսնացրին ըստ օրինաց կարգի: Նա մնաց պատվավոր ամուսնությամբ ըստ Պողոսի սուրբ անկողինով, ողջախոհությամբ՝ ինչպես տատրակ, մաքրությամբ՝ ինչպես արագիլ: Նրանք իբրև գառներ մնացին միասին որոշ ժամանակ, ապա օրհնեցին նրան քահանա Աստծու կամքով ու հաճությամբ: Եվ քահանայությունը անում էր արդարամտությամբ, չէր նայում ժողովրդի ինչքին ու

տուրքին, ագահություն չէր անում, չէր նեղում: Նա ամուսնությամբ և քահանայությամբ քիչ մնաց: Կինը մեռավ և տեր Մխիթարը միայնացավ: Մտածեց գնալ ինչ-որ անապատ, բայց գյուղացիք արգելում, չէին թողնում գնալ, քանի որ սիրում էին նրան բարի վարքի ու պարկեշտ գործի համար, քանզի խրատում ու հորդորում էր ուղղամիտներին: Սաստում ու հանդիմանում էր ստահակներին:

Գյուղում կար մի մարդ, այդ նահանգի գավառապետն էր. անվանում էին Մելիք Փարսադան: Սա խիստ ագահ էր, հափշտակող, հպարտ ու գոռոզ: Մխիթար քահանան խրատում էր նրան, որպեսզի հեռու մնա այդ անիրավ գործից և չկեղեքի ու զրկի ռամիկներին: Իսկ Մելիք Փարսադանը փոխանակ զղջալու և հետ կանգնելու չար գործից, ի հավելումն նաև ատեց պատվական քահանա Մխիթարին: Քեն էր քշում և նախանձում, կամենում էր նրան փորձանքի մեջ գցել: Իսկ Մխիթար քահանան պատճառներ էր որոնում, որ գյուղից դուրս գա և գնա անապատ, բայց հնար չէր գտնում:

Մի օր եզների երեք լուծ լծած օրան էր ծեծում կալում: Մելիքը իր ծառաներին ուղարկեց նրա մոտ և ասաց՝ եզներդ տուր, իմ օրանը կալսեմ, ահա անձրև է գալու, գուցե թրջի կալը: Երեցը պատասխանում է՝ եթե քոնը թրջի, չէ՞ որ իմն էլ կթրջի: Ահա տեսնում ենք (ինքը և ծառաները), որ կալսում եմ, որ գոնե չոր հավաքեմ կալը, այդ պատճառով եզներս չեմ տա: Ծառան գնաց պատմեց իր տիրոջը: Դարձյալ կրկին անգամ ուղարկեց և ասաց՝ եթե քո կամքով կուղարկես լավ է, իսկ թե ոչ, իմացիր, որ լրիվ չարիք է գալու քո գլխին: Մխիթար քահանան ասում է՝ ես իմ կամքով չեմ տա, իսկ եթե բռնությամբ հափշտակի, կարող է անել, եթե սպանելու է ինձ, թող սպանի, քանի որ մելիք է մեծ իշխանությամբ: Ծառան վերադարձավ պատմեց այս ևս:

Ապա մելիքը խրոխտացավ, բարկությամբ լցվեց որպես ծագկոտոր արջ, գույնը սևացավ ինչպես ածուխ և զայրացած ուղարկեց երեք կամ քշող ծառաներին և ասաց. «Գացեք բերեք եզները այնպես լծած, կամնասայլով կամ քշողով և ամեն ինչ, որ նրա վրա գտնվում է»: Ծառաները գնացին, արին այնպես, ինչպես որ հրամայել էր նրանց: Իսկ անհիշաչար Տեր-Մխիթարը չընդդիմացավ, չընդդիմացավ և ոչ էլ որևէ կոշտ խոսք ասաց: Այլ ինչպես Պողոսն արեց: Ասաց՝ մելիքին ասեք՝ գոհ եմ քեզնից, քանզի ինձ ազատե-